ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. մայիսի 13 - ից մայիսի 17-ը քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Վարդան Մաթևոսյան – ՀՀ ՊԵԿ մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության պետի տեղակալ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, 2024թ. մայիսի 13-ից մայիսի 17-ը

3.Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրական խորհրդատվական Կոմիտեի 02.10.2023թ. թիվ 4-ԿԿ արձանագրության համաձայն 13.05.2024-17.05.2024թթ. ք.Մոսկվայում կայացավ աշխատանքային հանդիպում, որի ընթացքում կատարվեցին ՀՀ և ՌԴ փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների համադրման աշխատանքներ:

5. Քննարկված թեմաները՝

ՀՀ և ՌԴ փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների համադրում, առկա շեղումների ուսումնասիրություն, պատճառների վերհանում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

1. ՀՀ և ՌԴ փոխադարձ առևտրի տվյալների հավաքագրման կազմակերպումը
2. ՀՀ արտահանման և ՌԴ ներմուծման վիճակագրական տվյալների համադրություն
3. ՀՀ ներմուծման և ՌԴ արտահանման վիճակագրական տվյալների համադրություն
4. Փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների հավաքագրման ամբողջականության ապահովում:

Փոխադարձ առևտրի վիճակագրության վարման համար հիմք են հանդիսանում վիճակագրական ձևերում, ապրանքային հայտարարագրերում (ՌԴ-ից ներմուծվող ակցիզային դրոշմապիտակով պիտակվող ապրանքներ) և տարանցման հայտարարագրերում պարունակվող տվյալները:

Աշխատանքային խմբի անդամները փաստեցին, որ փոխադարձ առևտրի ոլորտում ՀՀ-ի և ՌԴ-ի կողմից տվյալների հավաքագրումը և վիճակագրության վարումն իրականացվում է համաձայն ԵԱՏՀ 25.12.2018թ. հաստատված <<ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության վարման>> թիվ 210 միասնական մեթոդաբանության:

2023թ. ընթացքում ըստ Ռուսաստանի Դաշնության տվյալների՝ ՌԴ ներմուծումը ՀՀ-ից կազմել է 3 082,5 մլն ԱՄՆ դոլար, ըստ ՀՀ տվյալների՝ ՀՀ-ից ՌԴ արտահանումը կազմել է 3 538,9 մլն ԱՄՆ դոլար: Շեղումը կազմել է 456,4 մլն ԱՄՆ դոլար կամ 12,9%:

Նույն ժամանակահատվածում ըստ ՀՀ տվյալների՝ ՀՀ ներմուծումը ՌԴ-ից կազմել է 4 488,7 մլն ԱՄՆ դոլար, ըստ ՌԴ տվյալների՝ ՌԴ-ից ՀՀ արտահանումը՝ 4 364,2 մլն ԱՄՆ դոլար: Շեղումը կազմել է 124,51 մլն ԱՄՆ դոլար կամ 2,8%:

ԵԱՏՄ միասնական ԱՏԳ ԱԱ քառանիշ մակարդակում դիտարկվեցին առավել խոշոր շեղում ունեցող ապրանքները և բացահայտվեցին նշված շեղումների առաջացման հիմնական պատճառները, որոնցից են.

- ✓ հայկական և ռուսական կազմակերպությունների կողմից չներկայացված կամ ոչ ճիշտ ներկայացված վիճակագրական ձևերը,
- ✓ մեթոդաբանության տարբեր մեկնաբանությունները,

- ✓ ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ընդհանուր սահմանի բացակայությամբ պայմանավորված ժամանակային շեղումը:

Մասնավորապես, ՀՀ-ից ՌԴ արտահանման ժամանակ ԱՏԳ ԱԱ 8703 (մարդատար ավտոմեքենաներ), 0809 (ծիրան, բալ, կեռաս, դեղձ, նեկտարին, սալոր, մամուխ թարմ), 8704 (շարժիչային փոխադրամիջոց բեռնափոխադրման համար), 8429 (բուլդոզեր, գրեյդեր, էքսկավատոր) ապրանքային դիրքերում առկա շեղումները պայմանավորված են մեթոդաբանության առանձնահատկություններով՝ ՌԴ-ում ֆիզիկական անձինք անձնական օգտագործման ապրանքների համար վիճակագրական ձև չեն ներկայացնում, իսկ 0603 (հատած ծաղիկներ և կոկոններ), 2202 (ջրեր), 5509 (մանվածք սինթետիկ մանրաթելերից, չկշռածրարած), 8413 (պոմպ վերհան՝ հեղուկի), 8415 (կայանք օդի որակավորման), 8443 (տպագրական սարքավորում), 8518 (խոսափող) և 8708 (շարժիչային փոխադրամիջոցների մաս և սարքավորում) ապրանքային դիրքերում առկա շեղումները պայմանավորված են ռուսական ընկերությունների կողմից վիճակագրական հաշվետվությունների չներկայացմամբ կամ սխալ ներկայացմամբ, իսկ 6116 (ձեռնոց, թաթման), 9027 (սարք և ապարատուրա ֆիզիկական կամ քիմիական անալիզի) և 7202 (երկաթահամահալվածք) ապրանքային դիրքերում առկա շեղումները՝ հայկական ընկերությունների կողմից վիճակագրական ձևերի չներկայացմամբ կամ սխալ ներկայացմամբ:

ՌԴ-ից ՀՀ արտահանման տվյալների համաձայն՝ ԱՏԳ ԱԱ 1001 (ցորեն և մեսլին), 1003 (գարի), 1005 (եգիպտացորեն), 1701 (շաքար), 3926 (պլաստմասե այլ իրեր) և 7601 (ալյումին անմշակ) ապրանքային դիրքերում առկա շեղումները պայմանավորված են ռուսական ընկերությունների կողմից վիճակագրական հաշվետվությունների չներկայացմամբ կամ սխալ ներկայացմամբ, իսկ 8528 (մոնիտորներ և պրոյեկտորներ) ապրանքային դիրքում առկա շեղումը՝ անցումային (ժամանակային շեղում) փոխադրման հանգամանքով:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում կողմերը բացահայտեցին հայկական և ռուսական այն ընկերություններին, որոնք չէին ներկայացրել կամ թերի էին ներկայացրել վիճակագրական ձևեր և պայմանավորվեցին լիարժեք ու արժանահավատ տեղեկատվության ստացման նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

Հանդիպման ավարտին կողմերը ստորագրեցին ՀՀ և ՌԴ 2023թ. փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների համադրման աշխատանքների արձանագրությունը (կցվում է), ինչպես նաև երկուստեք կարևորեցին նման հանդիպումների ամենամյա ֆորմատով անցկացումը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Կողմերը քննարկեցին նաև ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանք չհանդիսացող ապրանքների տեղափոխման և հաշվառման առանձնահատկությունները փոխադարձ առևտրում և եկան այն ընդհանուր կարծիքին, որ անհրաժեշտ է ԵՏՀ հարթակում քննարկել փոխադարձ առևտրի վիճակագրության վարման մեթոդաբանության մեջ ապրանքների կարգավիճակի հետ կապված հարցը:

ՀՀ ՊԵԿ մաքսային ռիսկերի կառավարման և վիճակագրության վարչության մաքսային վիճակագրության և տեղեկատվության բաժնում կազմակերպվեց քննարկում, որի ընթացքում բաժնի մյուս աշխատակիցներին ներկայացվեցին գործուղման ընթացքում կատարված աշխատանքները, բարձրացվեցին հարցեր, որոնք ստացան իրենց պատասխանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Վարդան Մաթևոսյան

20.05.2024թ.